Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՎՐԱՍՏԱՆԻ

ՄԻՋԵՎ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՎՐԱՍՏԱՆԸ,

ղեկավարվելով երկու Պայմանավորվող պետությունների միջեւ տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցությունը զարգացնելու եւ ամրապնդելու ձգտումով եւ եկամուտների ու գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու եւ հարկերի վճարումից խուսափելը կանխելու նպատակով, որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը եւ պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1
Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2
Հարկերը, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող Պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների կողմից եկամուտներից եւ գույքից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտից ու գույքից գանձվող հարկեր են համարվում եկամուտների ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր գումարից կամ դրանց առանձին տարրերից գանձվող բոլոր հարկերը, ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամուտներից, ձեռնարկությունների կողմից վճարվող աշխատավարձի ընդհանուր գումարից, ինչպես նաեւ գույքի հավելաճից գանձվող հարկերը:

3. Համաձայնագրի գործողությունը տարածվում է, մասնավորապես, հետեւյալ գործող հարկերի վրա՝

ա) Վրաստանում՝
(i) հարկ ձեռնարկությունների շահույթից (եկամտից),
(ii) եկամտահարկ ֆիզիկական անձանցից,
(iii) հարկ ձեռնարկությունների գույքից,
(iv) հարկ ֆիզիկական անձանց գույքից,
(այսուհետ՝ «Վրաստանի հարկեր»):

բ) Հայաստանում՝
(i) շահութահարկ,
(ii) եկամտահարկ,
(iii) գույքահարկ,
(այսուհետ՝ «Հայաստանի հարկեր»):

4. Համաձայնագիրը կիրառվում է նաեւ բոլոր նույնական կամ համանման հարկերի նկատմամբ, որոնք կգանձվեն ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն՝ սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից հետո: Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կիրազեկեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված սկզբունքային փոփոխությունների մասին:

Հոդված 3
Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե այլ բան չի բխում ենթատեքստից.

ա) «մի Պայմանավորվող Պետություն» եւ «մյուս Պայմանավորվող Պետություն» արտահայտությունները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Վրաստան,

բ) «Վրաստան» տերմինը աշխարհագրական իմաստով նշանակում է Վրաստանի պետական սահմաններում ներառված տարածքը, ներառյալ ներքին եւ տարածքային ջրերը, ինչպես նաեւ բացառիկ տնտեսական գոտին ու մայրցամաքային շելֆը, որոնց վրա տարածվում է Վրաստանի իրավազորությունը, ինքնիշխան իրավունքները եւ հարկային օրենսդրությունը՝ միջազգային իրավունքի եւ Վրաստանի ազգային օրենսդրությանը համապատասխան,

գ) «Հայաստան» տերմինը աշխարհագրական իմաստով նշանակում է Հայաստանի Հանրապետության պետական սահմաններում ներառված տարածքը, ներառյալ ներքին ջրերը, որոնց վրա տարածվում է Հայաստանի Հանրապետության իրավազորությունը, ինքնիշխան իրավունքները եւ հարկային օրենսդրությունը՝ միջազգային իրավունքի եւ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան,

դ) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն կամ անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած կորպորատիվ միավորում կամ ցանկացած այլ միավորում, որը հարկման նպատակների համար դիտարկվում է որպես կորպորատիվ,

զ) «մի Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» եւ «մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» արտահայտությունները նշանակում են համապատասխանաբար մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն եւ մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

է) «միջազգային փոխադրում» արտահայտությունը նշանակում է ծովային կամ օդային նավով, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի փոխադրումն իրականացվում է բացառապես մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող կետերի մջջեւ,

ը) «իրավասու մարմին» արտահայտությունը նշանակում է.

(i) Վրաստանում՝ ֆինանսների նախարարը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը,

(ii) Հայաստանում՝ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը,

թ) «ազգային անձ» արտահայտությունը նշանակում է.

(i) Պայմանավորվող Պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

(ii) Պայմանավորվող Պետության գործող օրենսդրության հիման վրա այդպիսի կարգավիճակ ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա:

2. Պայմանավորվող Պետության կողմից սույն Համաձայնագիրը կիրառելիս նրանում չսահմանված ցանկացած տերմին կունենա այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ Պետության օրենսդրությամբ այն հարկերի նկատմամբ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը, եթե այլ բան ենթատեքստից չի հետեւում:

Հոդված 4
Ռեզիդենտ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ» արտահայտությունը նշանակում է անձ, որն այդ Պետության օրենսդրությամբ այնտեղ ենթակա է հարկմանը բնակության վայրի, մշտական տեղակայման վայրի, գրանցման վայրի, ղեկավարման մարմնի գտնվելու վայրի կամ այլ համանման չափանիշի հիման վրա: Սակայն, այդ տերմինը չի ներառում անձին, որն այդ Պայմանավորվող Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:

2. Այն դեպքում, երբ առաջին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետեւյալ կերպ.

ա) նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա ունի մշտական կացարան, եթե նա երկու Պետություններում էլ ունի մշտական կացարան, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական եւ տնտեսական կապերն (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են,

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա Պետություններից եւ ոչ մեկում չունի մշտական կացարան, նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա սովորաբար չի բնակվում դրանցից եւ ոչ մեկում, նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձ է նա հանդիսանում,

դ) եթե նա Պետություններից եւ ոչ մեկի ազգային անձ չի հանդիսանում, ապա Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները տվյալ հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ առաջին կետի դրույթների համաձայն ֆիզիկական անձ չհանդիսացող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որի օրենսդրությանը համապատասխան ստացել է իր կարգավիճակը որպես այդպիսին:

Հոդված 5
Մշտական հաստատություն

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է գործունեության մշտական վայր, որի միջոցով մի Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ամբողջությամբ կամ մասամբ իրականացնում է գործունեություն մյուս Պայմանավորվող Պետությունում:

2. «Մշտական հաստատություն» տերմինը, մասնավորապես ներառում է.

ա) ղեկավարման վայր,
բ) մասնաճյուղ,
գ) գրասենյակ,
դ) ֆաբրիկա,
ե) արհեստանոց,
զ) հանքահոր, հանքավայր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների հետախուզման, մշակման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. «Մշտական հաստատություն» տերմինը ներառում է նաեւ.

ա) շինարարական հրապարակը, շինարարական, մոնտաժային, հավաքման օբյեկտը, կամ նշված օբյեկտների հետ կապված հսկողական գործունեությունը միայն այն դեպքում, եթե դրանց հետ կապված աշխատանքների տեւողությունը գերազանցում է վեց ամիսը,

բ) ծառայությունների մատուցումը՝ ներառյալ խորհրդատվական ծառայությունները, ձեռնարկության կողմից այդ նպատակների համար վարձված ծառայողների կամ այլ անձնակազմի միջոցով, բայց միայն երբ այդ կարգի գործունեության տեւողությունը (մեկ կամ փոխկապակցված օբյեկտների համար) կազմում է ժամանակահատված կամ ժամանակահատվածներ, որոնք ընդհանուր առմամբ հավասար են ավելի քան 183 օրվան՝ ցանկացած 12 ամսյա ժամկետում:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության գործունեության հետեւյալ տեսակները չեն

դիտարկվում որպես մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատության միջոցով իրականացվող.

ա) կառույցների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահպանման եւ ցուցադրման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահպանման եւ ցուցադրման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով,

դ) գործունեության մշտական վայրի պահումը ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի բացառապես գնման, կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության մշտական վայրի պահումը ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության իրականացման նպատակով,

զ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ա) - ե) ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար, պայմանով, որ այդպիսի համակցության արդյունքում առաջացող գործունեության մշտական վայրի համընհանուր գործունեությունը կրում է նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած 1-ին եւ 2-րդ կետերի դրույթներին, եթե անձը անկախ կարգավիճակով գործակալ չէ, որի մասին խոսվում է 6-րդ կետում, եւ Պայմանավորվող Պետությունում գործում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը դիտարկվում է որպես առաջին հիշատակված Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն ունեցող՝ ցանկացած գործունեության առնչությամբ, որն այդ անձն իրականացնում է ձեռնարկության համար, եթե այդ անձը.

ա) ունի եւ սովորաբար այդ Պետությունում օգտագործում է ձեռնարկության անունից կոնտրակտներ կնքելու իրավասությունը, բացառությամբ, երբ այդ անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ կետում նշվածով, որը, եթե նույնիսկ իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով, ապա համաձայն այդ կետի դրույթներին այդ գործունեության մշտական վայրը վեր չի ածում մշտական հաստատության, կամ

բ) չունի այդպիսի իրավասություններ, բայց առաջին հիշատակված Պետությունում ձեռնարկության անունից սովորաբար պահում է ապրանքների եւ արտադրանքի պաշարներ:

6. Ձեռնարկությունը չի դիտարկվում որպես Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն, եթե նա այդ Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում բրոքերի, կոմիսիոների կամ անկախ կարգավիճակով ցանկացած այլ գործակալի միջոցով, պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում: Սակայն եթե այդպիսի գործակալի գործունեությունը ամբողջությամբ կամ մասամբ կենտրոնացված է այդ ձեռնարկության համար գործունեության վրա, ապա սույն կետի շրջանակներում նա չի դիտարկվի որպես անկախ կարգավիճակով գործակալ:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում, ինքնին այդ ընկերություններից մեկին չի վերածում մյուսի մշտական հաստատության:

Հոդված 6
Եկամուտներ անշարժ գույքից

1. Եկամուտները, որոնք Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից (ներառյալ եկամուտ գյուղացիական կամ անտառային տնտեսություններից), կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» արտահայտությունը պետք է ունենա այն նշանակությունը, որը նա ունի այն Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ արտահայտությունը, բոլոր դեպքերում պետք է ներառի անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում եւ անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերվող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի ուզուֆրուկտը եւ հանքային պաշարների, աղբյուրների եւ այլ բնական հանածոների մշակման կամ մշակման իրավունքի համար փոխհատուցման կարգով փոփոխական եւ հաստատագրված վճարումների իրավունքները: Ծովային կամ օդային նավերը, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաեւ անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տրամադրումից կամ ցանկացած այլ ձեւով օգտագործումից ստացված եկամուտների նկատմամբ:

4. Եթե ընկերությունում բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների տիրապետումը այդպիսի բաժնետոմսերի կամ կորպորատիվ իրավունքների սեփականատիրոջը իրավունք է տալիս օգտագործել ընկերությանը պատկանող անշարժ գույքը, ապա անմիջական օգտագործումից, վարձակալության տրամադրումից կամ այդպիսի իրավունքի օգտագործումից ցանկացած այլ ձեւով ստացված եկամուտները կարող են հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ անշարժ գույքը գտնվում է:

5. 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաեւ ձեռնարկության անշարժ գույքից առաջացած եկամուտների եւ անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից առաջացած եկամուտների նկատմամբ:

Հոդված 7
Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում, եթե միայն նման ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնում է նշված ձեւով, ապա նրա շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն մասով, որը վերաբերում է՝

ա) այդ մշտական հաստատությանը,

բ) այդ մյուս Պետությունում նույն կամ նմանատիպ ապրանքների կամ արտադրանքի վաճառքին, ինչպես եւ նրանք, որոնք վաճառվում են մշտական հաստատության միջոցով,

գ) այդ մյուս Պետությունում իրականացվող նույն կամ նմանատիպ ձեռնարկատիրական գործունեությանը, ինչպես եւ նրան, որը իրականացվում է մշտական հաստատության միջոցով:

2. Հաշվի առնելով սույն Հոդվածի 3-րդ կետի դրույթները, երբ մի Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որ նա կարող էր ստանալ այդպիսի կամ համանման պայմաններում, այդպիսի կամ համանման

գործունեությամբ զբաղված՝ առանձին եւ ինքնուրույն ձեռնարկություն լինելու դեպքում, եւ գործեր ամբողջովին անկախ ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունը հանդիսանում է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է այդպիսի մշտական հաստատության նպատակների համար կատարված՝ փաստացի հաստատված ծախսերի հանում, ներառյալ կառավարչական եւ ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն բանից կատարված են դրանք այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե նրա սահմաններից դուրս:

Սակայն այդպիսի հանումները չպետք է թույլատրվեն այն գումարների նկատմամբ, եթե այդպիսիք կան, որոնք վճարվում են (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխահատուցում) մշտական հաստատության կողմից իր ձեռնարկությանը կամ նրա ստորաբաժանումներից ցանկացածին պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիի, հոնորարների կամ այլ նմանատիպ վճարումների տեսքով, կամ ղեկավարման կամ մատուցած ծառայությունների համար միջնորդավճարների տեսքով, կամ (բացառությամբ բանկային ձեռնարկությունների) մշտական հաստատությանը նրանց կողմից տրամադրած փոխառության դիմաց - տոկոսների տեսքով:

4. Եթե Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատությանը վերաբերող շահույթի որոշումը ձեռնարկության տարբեր ստորաբաժանումների միջեւ շահույթի ընդհանուր գումարի համամասնական բաշխման հիման վրա հանդիսանում է սովորական երեւույթ, ապա 2-րդ կետում ոչինչ չի խոչընդոտի Պայմանավորվող Պետությանը հարկվող շահույթը հաշվարկել նման բաշխման միջոցով՝ ինչպես սովորաբար ընդունված է: Բաշխման ընտրված եղանակը պետք է համապատասխանի սույն Հոդվածի սկզբունքներին:

5. Ոչ մի շահույթ չի հաշվեգրվի մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից իր ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի միայն գնման հիման վրա:

6. Նախորդ կետերի նպատակների համար, մշտական հաստատությանը վերաբերող շահույթը ամեն տարի որոշվում է միեւնույն եղանակով, եթե միայն դրա փոփոխման համար հիմնավոր ու բավարար պատճառ չառաջանա:

7. Եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնց մասին առանձին նշված է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա այդ հոդվածների դրույթները չեն շոշափում սույն հոդվածի դրույթներին:

Հոդված 8
Միջազգային փոխադրում

1. Միջազգային փոխադրումներում ծովային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների շահագործումից ստացված շահույթը հարկվում է միայն այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման մարմինը:

2. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող տրանսպորտային ձեռնարկության շահույթը, որը ստացվում է ապրանքների եւ արտադրության տեղափոխման նպատակով շահագործվող կոնտեյներների (ներառյալ տրեյլերներ եւ կոնտեյներների տեղափոխման համար այլ սարքավորումներ) օգտագործումից, պահպանումից կամ վարձակալության տալուց, հարկվում է միայն այդ Պայմանավորվող Պետությունում:

3. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաեւ այն եկամուտների նկատմամբ, որոնք առաջանում են պուլում (միավորումում), համատեղ ձեռնարկությունում կամ տրանսպորտային միջոցների շահագործման միջազգային կազմակերպությունում մասնակցելուց, բայց միայն եկամտի այն մասի նկատմամբ, որը վերագրվում է համատեղ գործունեությունում նրա ունեցած մասնաբաժնին:

Հոդված 9
Ասոցացված (զուգորդված) ձեռնարկություններ

1. Այն դեպքում, երբ՝

ա) մի Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միեւնույն անձինք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության եւ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

եւ յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջեւ՝ նրանց առեւտրային եւ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջեւ, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր հաշվեգրվել նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է մտցվել այդ ձեռնարկության շահույթի մեջ եւ համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող Պետությունը այդ Պետության ձեռնարկության հարկվող շահույթի մեջ ներառում է եւ համապատասխանաբար հարկում շահույթ, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում արդեն իսկ ենթարկվել է հարկման, եւ այդպիսով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջին հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջեւ փոխհարաբերությունները լինեին նույնպիսին, ինչպես անկախ ձեռնարկությունների միջեւ, ապա այդ մյուս Պետությունը կկատարի այնտեղ հաշվեգրված այդ շահույթի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս, պատշաճ կերպով հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները, անհրաժեշտության դեպքում, կխորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10
Շահաբաժիններ

1. Մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման շահաբաժինները կարող են հարկվել նաեւ այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենսդրությանը համապատասխան, սակայն եթե ստացողը համարվում է շահաբաժինների փաստացի սեփականատեր, ապա այդ ձեւով գանձվող հարկը չպետք է գերազանցի՝

ա) շահաբաժինների համախառն գումարի 5%, եթե ընկերությունը (բացառությամբ ընկերակցությունից) համարվում է շահաբաժինների եւ միաժամանակ շահաբաժիններ վճարող ընկերության կանոնադրական հիմնադրամի (գույքի) առնվազն 25% փաստացի սեփականատեր,

բ) շահաբաժինների համախառն գումարի 10%՝ մնացած բոլոր դեպքերում:

Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները այս սահմանափակման կիրառման եղանակը կսահմանեն փոխադարձ համաձայնությամբ:

Այս կետը չի շոշափում ընկերության հարկումը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժիններ:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում կիրառվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող, այլ իրավունքներից, ինչպես նաեւ եկամուտ այլ կորպորատիվ իրավունքներից,

որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորմանը, ինչպես բաժնետոմսերից ստացվող եկամուտ, այն Պետության հարկային օրենսդրությանը համապատասխան, որի ռեզիդենտն է հանդիսանում շահույթի բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտ է համարվում շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, եւ հոլդինգը, որի հետ կապված շահաբաժիններ են վճարվում, հիրավի վերաբերվում է նման մշտական հաստատությանը կամ մշտական բազային: Այդ դեպքում, ելնելով հանգամանքներից, կիրառվում են 7 կամ 14 հոդվածների դրույթները:

5. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտներ է ստանում մյուս Պայմանավորվող Պետությունից, այդ մյուս Պետությունը կարող է հարկումից լրիվ ազատել այդ ընկերության կողմից վճարվող շահաբաժինները, բացառությամբ, եթե այդ շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե հոլդինգը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, հիրավի վերաբերվում է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատությանը կամ մշտական բազային, եւ ընկերության չբաշխված շահույթից հարկեր չգանձել, եթե նույնիսկ շահաբաժինները վճարվում են կամ չբաշխված շահույթը լրիվ կամ մասնակիորեն կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11
Տոկոսներ

1. Մի Պայմանավորվող Պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն, այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաեւ այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ դրանք համապատասխան այդ Պետության օրենսդրությանը առաջանում են, բայց եթե ստացողը համարվում է տոկոսների փաստացի սեփականատեր, ապա գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10%: Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կսահմանեն փոխադարձ համաձայնությամբ:

3. «Տոկոսներ» տերմինը սույն Համաձայնագրում կիրառելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոթեքային ապահովումից եւ պարտապանի շահույթներին մասնակցելու իրավունքի առկայությունից, ինչպես նաեւ կառավարական արժեթղթերից եւ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից եկամուտը, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի պարգեւավճարներն ու շահումները: Սույն Հոդվածի նպատակների համար ժամկետանց վճարումների դիմաց գանձվող տուգանքները որպես տոկոսներ չեն դիտարկվում:

4. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, տոկոսների առաջացման աղբյուր հանդիսացող մյուս Պայմանավորվող Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, եւ պարտապահանջը, որի հիման վրա տոկոսները վճարվում են, հիրավի վերաբերվում է նման մշտական հաստատությանը կամ մշտական բազային: Այդ դեպքում, ելնելով հանգամանքներից, կիրառվում են 7 կամ 14 հոդվածների դրույթները:

5. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն ինքն այդ Պետությունն է, իր վարչա-տարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է թե ոչ, մշտական հաստատություն կամ մշտական բազա ունի Պայմանավորվող Պետությունում, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, եւ այդ տոկոսների վճարման ծախսերը կատարում է նման մշտական հաստատությունը կամ մշտական բազան, ապա համարվում է, որ նման տոկոսները առաջանում են այն Պետությունում, որտեղ գտնվում են մշտական հաստատությունը կամ մշտական բազան:

6. Եթե վճարողի եւ տոկոսների փաստացի սեփականատերի, կամ նրանց երկուսի եւ որեւէ երրորդ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով վճարման նպատակով հիմք ծառայող պարտապահանջին վերաբերող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ տոկոսների փաստացի սեփականատիրոջ միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասը առաջվա պես հարկվում է Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

Հոդված 12
Ռոյալթի

1. Մի Պայմանավորվող Պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող ռոյալտին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման ռոյալտին կարող է հարկվել նաեւ Պայմանավորվող Պետությունում, որտեղ դրանք առաջանում են համապատասխան այդ Պետության օրենսդրությանը, բայց եթե ստացողը հանդիսանում է ռոյալտիի փաստացի սեփականատերը, ապա այդ դեպքում գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 5%: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կսահմանեն փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է փոխհատուցման տեսքով ստացվող ցանկացած տեսակի վճարումներ գրականության, արվեստի կամ գիտության ստեղծագործությունների, ներառյալ կինոֆիլմերը, ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար ձայնագրությունները, համակարգչային ծրագրերի, ցանկացած պատենտների, ապրանքանիշի, դիզայնի կամ մոդելի, պլանի, գաղտնի բանաձեւի կամ գործընթացի, կամ ցանկացած հեղինակային իրավունքների օգտագործման, կամ օգտագործման իրավունքի տրամադրման համար, կամ արդյունաբերական, առեւտրային կամ գիտական փորձի վերաբերյալ տեղեկության համար:

4. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում ռոյալտիի աղբյուր հանդիսացող մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, եւ իրավունքը կամ գույքը, որոնց նկատմամբ վճարվում է ռոյալթին, հիրավի կապված են այդպիսի մշտական հաստատության կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, ելնելով հանգամանքներից, կիրառվում են 7 կամ 14 հոդվածների դրույթները:

5. Համարվում է, որ ռոյալտին առաջանում է Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողը ինքն այդ Պետությունն է, իր վարչա-տարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը, կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե ռոյալթի վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է թե ոչ, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն կամ մշտական բազա, որի կապակցությամբ ռոյալթի վճարելու պարտավորություն է առաջացել եւ այդ ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդ մշտական հաստատությունը կամ մշտական բազան, ապա համարվում է, որ ռոյալթին առաջանում է այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ մշտական բազան:

6. Եթե վճարողի եւ փաստացի սեփականատերի միջեւ կամ նրանց երկուսի եւ երրորդ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով վճարման համար հիմք ծառայող օգտագործմանը, իրավունքին կամ տեղեկատվությանը վերաբերող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը համաձայնեցված կլիներ վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ միջեւ՝ այդպիսի հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասն առաջվա պես հարկվում է Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան, պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

Հոդված 13
Եկամուտներ գույքի օտարումից

1. Մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամուտները, ստացված մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից (սահմանված 6 Հոդվածում), կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության տնօրինության տակ գտնվող եւ մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատության առեւտրային գույքի մաս կազմող կամ անկախ ծառայությունների մատուցման համար մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի տնօրինության տակ գտնվող եւ մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած եկամուտները, ներառյալ նման մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ նման մշտական բազայի օտարումից առաջացած եկամուտները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների կամ դրանց շահագործման հետ կապված շարժական գույքի օտարումից առաջացած եկամուտները հարկվում են այն Պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման մարմինը:

4. Մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից բաժնետոմսերի կամ ընկերության, որի ակտիվները հիմնականում ուղղակի կամ անուղղակի կերպով կազմված են մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից, այլ կորպորատիվ իրավունքների օտարումից առաջացած եկամուտները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում չնշված ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած եկամուտները հարկվում են միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում գույքը օտարող անձը:

Հոդված 14
Անկախ անձնական ծառայություններ

1. Եկամուտը, որ մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է մասնագիտական ծառայությունների մատուցումից կամ այլ, անկախ բնույթի գործունեությունից, հարկվում է միայն այդ Պետությունում, բացառությամբ այն դեպքի, երբ նա այդ գործունեությունն իրականացնելու համար մյուս Պայմանավորվող Պետությունում տնօրինության տակ ունի կանոնավար օգտագործվող մշտական բազա: Եթե նա ունի նման մշտական բազա, ապա եկամուտը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այդ մշտական բազային վերաբերող մասով:

2. «Մասնագիտական ծառայություններ» արտահայտությունը ներառում է մասնավորապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ դասախոսական գործունեություն, ինչպես նաեւ բժիշկների, իրավաբանների, ինժեներների, ճարտարապետների, ատամնաբույժների, հաշվապահների, աուդիտորների անկախ գործունեություն:

Հոդված 15
Վարձու աշխատանք

1. Հաշվի առնելով 16, 18 եւ 19 հոդվածների դրույթները՝ աշխատավարձը եւ նման այլ վարձատրությունները, որոնք մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է վարձու աշխատանքի դիմաց, հարկվում են միայն այդ Պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող Պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է նման ձեւով, ապա այդ առնչությամբ ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթների, մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած վարձատրությունը մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց, հարկվում է միայն առաջին հիշատակված Պետությունում, եթե՝

ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետում կամ ժամկետներում՝ ցանկացած 12-ամսյա ժամկետում, որը սկսվում կամ վերջանում է տվյալ օրացուցային տարում, եւ

բ) վարձատրությունը կատարվում է այդ մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող վարձող կողմից կամ վարձողի անունից, եւ

գ) վարձատրությունների վճարման ծախսերը չի կրում այդ մյուս Պետությունում վարձողի ունեցած մշտական հաստատությունը կամ մշտական բազան:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային կամ օդային նավերում, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցներում իրականացվող վարձու աշխատանքի հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման մարմինը:

Հոդված 16
Տնօրենների հոնորարները

Տնօրենների հոնորարները եւ մյուս նույնատիպ վճարումները, որոնք մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է, որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 17
Արվեստի աշխատողները եւ մարզիկները

1. Անկախ 14 եւ 15 հոդվածների դրույթներից՝ այն եկամուտը, որը մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է որպես արվեստի աշխատող՝ ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը, կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող, որպես այդպիսին, իր անձնական գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե արվեստի աշխատողի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացվող անձնական գործունեության եկամուտը վերագրվում է ոչ թե անմիջապես արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա, անկախ 7, 14 եւ 15 հոդվածների դրույթներից, այդ եկամուտը կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ արվեստի աշխատողը կամ մարզիկը իրականացնում է այդ գործունեությունը:

3. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն վերաբերում այն եկամուտին, որը արվեստի աշխատողները կամ մարզիկները ստանում են Պայմանավորվող Պետությունում իրականացվող գործունեությունից, եթե այդ Պետության այցելությունը իրականացվում է Պայմանավորվող Պետությունների կառավարությունների միջեւ կնքված մշակութային եւ մարզական փոխանակման համաձայնագրի շրջանակներում եւ (կամ) ամբողջովին ֆինանսավորվում է Պայմանավորվող Պետություններից որեւէ մեկի, իրենց վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների հասարակական հիմնադրամներից: Այդ դեպքում եկամուտը հարկվում է միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտ է համարվում տվյալ արվեստի աշխատողը կամ մարզիկը:

Հոդված 18
Կենսաթոշակներ

Հաշվի առնելով 19 հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակները եւ այլ համանման վարձատրությունները՝ կապված նրա նախկին վարձու աշխատանքի հետ, հարկվում են միայն այդ Պետությունում:

Հոդված 19
Պետական ծառայություն

1. ա) Պայմանավորվող Պետության կամ իր վարչատարածքային ստորաբաժանման, կամ իշխանության տեղական մարմնի կողմից ցանկացած ֆիզիկական անձին այդ Պետության կամ իր վարչա-տարածքային ստորաբաժանմանը, կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց կենսաթոշակից բացի վճարված վարձատրությունը, հարկվում է միայն այդ Պետությունում:

բ) Սակայն նման վարձատրությունը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում եւ այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը՝

(i) հանդիսանում է այդ Պետության ազգային անձ, կամ

(ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտը միայն ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող Պետության կամ վարչատարածքային ստորաբաժանման, կամ իշխանության տեղական մարմնի , կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ վարչատարածքային ստորաբաժանմանը, կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարված ցանկացած կենսաթոշակ հարկվում է միայն այդ Պետությունում:

բ) Սակայն, նման կենսաթոշակը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտ ու ազգային անձ:

3. 15, 16 եւ 18 հոդվածների դրույթները կկիրառվեն այն ծառայությունների վարձատրման եւ կենսաթոշակների նկատմամբ, որոնք մատուցվում են Պայմանավորվող Պետության կամ իր վարչատարածքային ստորաբաժանման, կամ իշխանության տեղական մարմնի կողմից իրականցվող ձեռնարկատիրական գործունեության համաձայն:

Հոդված 20
Ուսանողներ

Մինչեւ անմիջականորեն մի Պայմանավորվող Պետություն ժամանելը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող կամ հանդիսացած եւ առաջին հիշատակված Պետությունում բացառապես ուսանելու կամ կրթություն ստանալու նպատակով գտնվող ուսանողի կամ ստաժորի կողմից ստացվող վճարումները՝ նախատեսված ապրելու, ուսանելու կամ կրթություն ստանալու համար, չեն հարկվում առաջին հիշատակված Պետությունում, եթե այդ վճարումների աղբյուրները գտնվում են այդ Պետության սահմաններից դուրս:

Հոդված 21
Պրոֆեսորներ, ուսուցիչներ եւ գիտական աշխատողներ

1. Մինչեւ անմիջականորեն մի Պայմանավորվող Պետություն ժամանելը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող կամ հանդիսացած եւ առաջին հիշատակված Պետությունում համալսարանում, քոլեջում, կամ այլ ուսումնական կամ գիտա-հետազոտական հաստատությունում, ոչ ավելի քան երկու տարով, բացառապես դասավանդելու կամ գիտական հետազոտությունների նպատակով գտնվող պրոֆեսորի, ուսուցչի կամ գիտական աշխատողի կողմից ստացվող վճարումները չեն հարկվում այդ առաջին Պետությունում, եթե այդ վճարումների աղբյուրները գտնվում են այդ Պետության սահմաններից դուրս:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվի հետազոտություններից ստացված այն եկամուտների նկատմամբ, որոնք կատարվել են՝ ելնելով որեւէ առանձին անձի կամ անձանց մասնավոր, այլ ոչ թե հասարակության շահերից:

Հոդված 22
Այլ եկամուտներ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամուտների՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված տեսակները, անկախ նրանց առաջացման աղբյուրից, հարկվում են միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6 հոդվածի 2-րդ կետով սահմանված անշարժ գույքի եկամուտներից տարբեր այլ եկամուտների նկատմամբ, եթե նման եկամուտներ ստացողը, լինելով մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, մյուս Պայմանավորվող Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում, այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով, կամ այդ մյուս Պետությունում մատուցում է անկախ անձնական ծառայություններ այնտեղ

գտնվող մշտական բազայի միջոցով, եւ իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ ստացվել է եկամուտը, հիրավի կապված է այդպիսի մշտական հաստատության կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից ելնելով, կիրառվում են 7 կամ 14 հոդվածների դրույթները:

3. Չնայած 1-ին եւ 2-րդ կետերի դրույթներին մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված եւ մյուս Պայմանավորվող Պետությունում առաջացած եկամտի տեսակները կարող են հարկվել նաեւ այդ մյուս Պետությունում:

Հոդված 23
Գույք

1. Մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի սեփականություն հանդիսացող եւ մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքով ներկայացված գույքը, որի մասին հիշատակվում է 6 հոդվածում, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության գույքը՝ ներկայացված մյուս Պայմանավորվող Պետությունում ունեցած մշտական հաստատության մաս կազմող շարժական առեւտրային գույքով կամ մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի տնօրինության տակ գտնվող եւ անկախ անձնական ծառայություններ մատուցելու նպատակով մյուս Պայմանավորվող Պետությունում տեղաբաշխված մշտական բազայի հետ կապված շարժական գույքը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Գույքը, ներկայացված միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային կամ օդային նավերով, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցներով, կամ դրանց շահագործման հետ կապված շարժական գույքով, կարող է հարկվել միայն այն Պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման մարմինը:

4. Մի Պայմանավորվող Պետությունում գտնվող ընկերության գույքը՝ ներկայացված բաժնետոմսերով կամ ընկերության այլ կորպորատիվ իրավունքով եւ որոնց ակտիվները կազմված են գլխավորապես անշարժ գույքից, կարող է հարկվել այդ Պետությունում:

5. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր մասնիկները հարկվում են միայն այդ Պետությունում:

Հոդված 24
Կրկնակի հարկման վերացումը

1. Եթե մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք սույն Համաձայնագրի դրույթների համաձայն կարող են հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում, ապա առաջին հիշատակված Պետությունը թույլ կտա՝

ա) այդ ռեզիդենտի եկամտահարկից հանել այդ մյուս Պետությունում վճարված եկամտահարկին հավասար գումար,

բ) այդ ռեզիդենտի գույքահարկից հանել այդ մյուս Պետությունում վճարված գույքահարկին հավասար գումար:

Այդ հանումները, երկու դեպքերում էլ, կախված հանգամանքներից, չպետք է գերազանցեն եկամտահարկի կամ գույքահարկի՝ մինչեւ այդ մյուս Պետությունում հարկման ենթակա եկամտին կամ գույքին վերաբերող հանման տրամադրումը, հաշվարկված մասը:

2. Եթե սույն Համաձայնագրի որեւէ դրույթին համապատասխան Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամուտը կամ գույքը այդ Պետությունում ազատված են հարկից, ապա այդ Պետությունը, այդուհանդերձ, կարող է այդ ռեզիդենտի գույքի կամ եկամտի մնացած մասի վրա դրվող հարկի գումարը որոշելիս հաշվի առնել հարկից ազատված եկամուտը կամ գույքը:

3. Մի Պայմանավորվող Պետությունը թույլ է տալիս իբրեւ հանում ընդունել հարկի գումարը, որը կարող էր գանձվել մյուս Պայմանավորվող Պետությունում՝ նրա հարկային օրենսդրությանը համապատասխան, կամ սույն Համաձայնագրի 10, 11 եւ 12 հոդվածների դրույթներով սահմանափակված գումարը, եթե նույնիսկ այդ մյուս Պետությունը չի գանձում այդ հարկերը կամ նրանց մի մասը՝ համաձայն ազգային օրենսդրությամբ տրամադրվող հարկային արտոնությունների:

Հոդված 25
Անխտրականություն

1. Մի Պայմանավորվող Պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող Պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությանը, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունը, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք նույն հանգամանքների դեպքում, մասնավորապես ռեզիդենտության առումով: Այս դրույթը, չնայած 1 հոդվածի դրույթներին, կիրառվում է նաեւ Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող, քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող Պետություններից եւ ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությանը, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունը, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ Պետությունների ազգային անձինք միեւնույն հանգամանքների դեպքում:

3. Մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող Պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է նվազ բարենպաստ լինի, քան այդ մյուս Պետությունում համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող մի Պայմանավորվող Պետությանը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտներին տրամադրելու որեւէ անձնական արտոնություններ, ներառյալ նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկային հանումները եւ զեղչերը, որոնք նա տրամադրում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9 հոդվածի 1-ին կետի, 11 հոդվածի 6-րդ կետի կամ 12 հոդվածի 6-րդ կետի դրույթները, մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները, ռոյալթին կամ այլ կատարած վճարումներ, պետք է նման ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա լինեն հանմանը այն նույն պայմաններով, ինչպես առաջին հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին ցանկացած պարտք, այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով պետք է ենթակա լինի հանմանը, այն նույն պայմաններով, որն է պարտքը առաջին հիշատակված Պետության ռեզիդենտին:

5. Մի Պայմանավորվող Պետության ձեռնարկությունները, որոնց գույքը լրիվ կամ մասնակիորեն պատկանում է մեկ կամ մի քանի ռեզիդենտների, կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է մյուս Պայմանավորվող Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջին հիշատակված Պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ նրա հետ կապված պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունը, որին կարող են ենթարկվել առաջին հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկություններ:

6. Չնայած 2 հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կկիրառվեն հարկերի յուրաքանչյուր տեսակի կամ ձեւի նկատմամբ:

Հոդված 26
Փոխհամաձայնեցման արարողակարգը

1. Եթե անձը գտնում է, որ Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող նրա հարկմանը, ապա նա կարող է, այդ Պետությունների ազգային օրենսդրությամբ նախատեսված պաշտպանական միջոցներից անկախ, քննարկման համար իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմիններին, որի ռեզիդենտն է ինքը, կամ, եթե դեպքը վերաբերում է 24 հոդվածի 1-ին կետին, այն Պետության իրավասու մարմիններին, որի ազգային անձն է նա: Դիմումը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողությունների մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե իրավասու մարմինը դիմումը համարի հիմնավորված կամ եթե ինքը ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ որոշման, կձգտի հարցը լուծել մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ, նպատակ ունենալով բացառել Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը: Ցանկացած ձեռք բերված պայմանավորվածություն պետք է կատարվի անկախ Պայմանավորվող Պետությունների ազգային օրենսդրությունում առկա որեւէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները փոխհամաձայնությամբ կձգտեն լուծել բոլոր դժվարությունները կամ կասկածները, որոնք կարող են առաջանալ սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաեւ, Համաձայնագրով չնախատեսված դեպքերում, համատեղ խորհրդակցել կրկնակի հարկումը վերացնելու նպատակով:

4. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի ըմբռնման նպատակով համաձայնության հասնելու: Իրավասու մարմինները խորհրդատվությունների միջոցով կարող են մշակել համապատասխան երկկողմանի արարողակարգեր, պայմաններ, մեթոդներ եւ մեթոդիկա սույն Հոդվածով նախատեսված փոխհամաձայնեցման արարողակարգի կիրառման նպատակով:

Հոդված 27
Տեղեկատվության փոխանակում

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները փոխանակվում են տեղեկատվությամբ՝ անհրաժեշտ սույն Համաձայնագրի կամ Պայմանավորվող Պետությունների ազգային օրենսդրությունների դրույթների կատարման համար, այն հարկերի վերաբերյալ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը այն չափով, որքանով հարկումը չի

հակասում Համաձայնագրին: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1 հոդվածով: Պայմանավորվող Պետության կողմից ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի այնքանով, որքանով այդ Պետության ազգային օրենսդրության շրջանակում ստացված տեղեկատվությունն է, եւ տեղեկացվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները եւ վարչական մարմինները), որոնք զբաղված են այն հարկերի գնահատմամբ կամ հավաքագրումով, բռնագանձմամբ կամ դատական հետապնդումով, կամ բողոքարկումների քննարկմամբ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը: Ստացված տեղեկատվությունը անձինք կամ մարմինները պետք է օգտագործեն միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել այդ տեղեկատվությունը դռնբաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներ ընդունելիս:

2. 1-ին կետի դրույթները եւ ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պայմանավորվող Պետություններին պարտավորեցնող՝

ա) անցկացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենսդրությանը կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկատվություն, որը չի կարելի ստանալ այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ կամ սովորական վարչական գործավարության ընթացքում.

գ) ներկայացնելու տեղեկատվություն, որը կբացահայտի որեւէ առեւտրական, արդյունաբերական, առեւտրային կամ մասնագիտական գաղտնիք, կամ առեւտրական գործընթաց կամ տեղեկատվություն, որի բացահայտումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

Հոդված 28
Դիվանագիտական առաքելությունների եւ հյուպատոսական հաստատությունների անդամները

Սույն Համաձայնագրի եւ ոչ մի դրույթ չի շոշափում դիվանագիտական առաքելությունների եւ հյուպատոսական ծառայողների հարկային արտոնությունները, որոնք սահմանված են միջազգային իրավունքի ընդհանուր նորմերով կամ հատուկ համաձայնագրերով:

Հոդված 29
Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ներպետական արարողակարգերի, ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ, կատարման

մասին ծանուցագրերից վերջինիս ուղարկելու օրվանից եւ նրա դրույթները կիրառվում են.

i) աղբյուրից գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1 կամ հունվարի 1 հետո վճարվող գումարներից,

ii) եկամուտներից եւ գույքից գանձվող այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1 կամ հունվարի 1 հետո վճարվող կամ հաշվարկվող հարկերի նկատմամբ:

Հոդված 30
Գործողության դադարեցումը

Սույն Համաձայնագիրը մնում է ուժի մեջ մինչեւ Պայմանավորվող Պետություններից մեկի կողմից նրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Համաձայնագրի գործողությունը ուժի մեջ մտնելու պահից հինգ տարի անցնելուց հետո ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ, դիվանագիտական ուղիներով դենոնսացիայի մասին ծանուցագիր հանձնելու միջոցով:

Այդ դեպքում Համաձայնագիրը դադարեցնում է գործողությունը.

i) աղբյուրից գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1 կամ հունվարի 1 հետո վճարվող գումարների նկատմամբ.

ii) եկամուտներից եւ գույքից գանձվող այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1 կամ հունվարի 1 հետո վճարված կամ հաշվարկված հարկերի նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ համապատասխան ձեւով լիազորված ներքոստորագրողներս ստորագրեցինք սույն Համաձայնագիրը:

Կատարվել է ք. Թբիլիսիում 1997. թվականի հոկտեմբերի ամսի 17-ին երկու բնօրինակով, հայերեն, վրացերեն եւ ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տեքստերի մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում որպես հիմք ընդունվում է ռուսերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ